# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

10.11.2024



**Սիրելի՛ հայրենակիցներ**

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգն այսօր դառնում է 28 տարեկան:
Նոյեմբերի 10-ին նշվող մասնագիտական տոնի առիթով շնորհավորում եմ ՏԻՄ ոլորտի ներկայացուցիչներին՝ համայնքների ղեկավարներին, ավագանիների անդամներին, համայնքային ծառայողներին և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին:
Շնորհավորում եմ նաև պետական կառույցների այն աշխատակիցներին, որոնք համագործակցում են ՏԻՄ բնագավառի
հետ ու համակարգում նրանց աշխատանքը:
Տեղական ինքնակառավարումը ժողովրդավարական համակարգի կարևորագույն հիմնասյուներից է, և ՏԻՄ օրը հաստատապես մտել է մեր երկրի մասնագիտական տոների օրացույց: Այսօր տեսանելի է տեղական ինքնակառավարման հսկայական դերը Հայաստանում պետականության կառուցման, տեղական ինստիտուտների ձևավորման և կատարելագործման ընթացքում:
Կառավարության և հասարակության միջև փոխգործակցության ամրապնդումը համայնքների զարգացման և առաջընթացի երաշխիքներից են: Իսկ նրանց կապող օղակը, ինչպես նաև տեղական մակարդակում քաղաքացիների՝ որոշումներ կայացնելու գործընթացներում ներգրավվածությունն ապահովողն ու երաշխավորը ՏԻՄ-ն է:
Կենսական է տեղական ինքնակառավարման մարմինների դերը համայնքների զարգացման գործում, և նրանց ղեկավարների, ավագանիների, համայնքային ծառայողների կոմպետենտությունից, արհեստավարժությունից, պատասխանատվության զգացումից, լիակատար նվիրումով աշխատելու պատրաստակամությունից է կախված իրենց համայնքի ու նրա բնակիչների կյանքի որակի բարելավումը:
Սյունիքի մարզի համընդհանուր զարգացումն, իհարկե, ամփոփում է մեր բոլոր համայնքների բոլոր բնակավայրերի զարգացումը: Միասին մենք ընդհանուր նպատակ ունենք՝ մեր հայրենակիցների կյանքն ավելի հարմարավետ ու բարեկեցիկ դարձնել: Ուստի, վերահաստատում եմ մարզային իշխանության հանձնառությունը՝ աջակցելու զարգացման շարունակական նախաձեռնություններին:
Եվ քանի որ ձեր աշխատանքը, նախևառաջ, ծառայություն է և մեծ պատասխանատվություն, շնորհակալություն եմ հայտնում մարզի բոլոր ՏԻՄ ներկայացուցիչներին՝ կատարած աշխատանքի և նվիրվածության համար, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում ավանդի, համաքաղաքացիների և հայրենի հողի հանդեպ անկեղծ մտահոգության համար:
Բոլորիդ մաղթում եմ քաջառողջություն, աշխատելու խաղաղ միջավայր, նոր գաղափարներ և դրանց իրագործումն ի շահ Սյունիքի:
**Թո՛ղ բնակիչների ըմբռնումն ու աջակցությունը օգնեն հաղթահարել խոչընդոտները և հասնել ցանկալի արդյունքների:**